ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ‘ԻՐԱԶԵԿ ԲԱՆԱԿ’ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

05.06.2014 11:10

Մեկնարկել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի նպատակն է ‘Իրազեկ բանակ’ փաստաբանական ծրագրի շրջանակներում Արցախի զորամասերում ժամկետային զինծառայողների և սպաների շրջանում դասախոսություններով հանդես գալը:

Պալատի պատվիրակությունը հունիսի 5-ին դասախոսություններով է հանդես եկել ԼՂՀ N զորամասերում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Վրեժ Խաչիկյանը բացման իր խոսքում կոչ է արել զինվորներին տեղեկանալ իրենց իրավունքների պաշտպանությանը, որը դիրքերում կանգնած զինվորի համար մեծագույն ուժն է:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը զինվորներին ողջունել է և խնդրել, որ պատվիրակության անդամների հետ երկխոսության ընթացքում լինեն հնարավորինս անմիջական: Վերջինս ներկայացրել է փաստաբանների պալատի գործառույթները և իրականացվող աշխատանքները փաստաբանի դերի բարձրացման ուղղությամբ:

Արա Զոհրաբյանը անդրադառնալով զինվորական խնդիրներին՝ նշել է, որ ինքն էլ է ծառայել ՀՀ զինված ուժերում և անմիջականորեն ծանոթ է զինվորի խնդիրներին և այս այցի նպատակն է բարձրացնել զինվորի իրավագիտակցությունը: ‘Ես ցանկանում եմ, որ դուք կարևորեք ձեր կատարած գործը, քանի որ քաղաքացիական կյանքով ապրող քաղաքացիներս մեծապես կարևորում ենք բանակի դերը: Եթե դուք զինվորական համազգեստ եք հագել և կարծում եք, թե դուք որևէ մեկին հետաքրքիր չեք, բացի ձեր հարազատներից, իմացեք, որ այդպես չէ’,-նշել է պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Արա Զոհրաբյանը խոսել է պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և դրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև քաղաքացու ընդհանուր իրավունքների և պարտականությունների մասին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինավոր Մեղրյանը զինծառայողներին ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի միջազգային իրավական կարգավիճակի մասին թեման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի քաղաքական իշխանությունների դիրքորոշումները՝ ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության խնդիրների և ադրբեջանական

քարոզչամեքենայի ստահոդ լուրերի տարածման խնդիրների մասին: ‘Հայ ժողովուրդը հաղթանակել է իրեն պարտադրված պատերազմը և եկել է մի փուլ, երբ պետք է միջազգային իրավունքը օգտագործելով ապահովել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը և քանի դեռ հայ զինվորը կանգնած է առաջնագծում ճանաչման գործընթացը հնարավոր է կայացնել: Առանց սահմանին կանգնած հայ զինվորի անհնար է խոսել միջազգային իրավունքի համակարգում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման մասին’,-նշել է Զինավոր Մեղրյանը:

Ռազմական հանցագործությունների և քրեական պատասխանատվության ենթարկելու մասին ելույթով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանը՝ ներկայացնելով զինվորների սպաների իրավունքները քրեական գործերով վարույթների ընթացքում:

Զինվորները և սպաները պատվիրակության անդամներին ներկայացրել են իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերել են ոչ միայն զինվորական ծառայությանը, այլ նաև քաղաքացիաիրավական գործարքներին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Մելանյա Առուստամյանը, խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանը, Նելլի Հարությունյանը, Պալատի նախագահի խորհրդականներ Զինավոր Մեղրյանը, Իրինա Փիլոյանը և Պալատի նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական, ՀՀ ռազմական թաեքվանդոյի ֆեդերացիայի նախագահ Վրեժ Խաչիկյանը, Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱ ՓԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ԿԱՅՈՒՆ ՊՐՏԵԼԻԲԵԼԵՐԻ ՀԱՄԱՏԱՄՄԱԲ
ԲՈՒՅՐՈՅՆԵՆԵՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱ ՓԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })